Արձանագրություն N 3

<<ԾՔ-ԳՀԱՊՁԲ-19/42>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով հայտարարված Ծաղկաձոր համայնքի կարիքների համար լեռնադահուկային մարզահագուստի ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք.Ծաղկաձոր 09 դեկտեմբեր 2019թ.

ժամը 10:00

Մասնակցում էին հանձնաժողովի
Նախագահ՝ Ն.Խաչատրյան
անդամներ՝ Վ.Հայրապետյան
Լ.Խաչատրյան
Ա.Միրզոյան /փոխարինում է արձակուրդում գտնվող հանձնաժողովի անդամ Լ. Սարգսյանին/
քարտուղար՝ Ա.Ավետիսյան

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 26-րդ կետի 1-ին մասը՝ հանձնաժողովի նիստին նախագահի մասնակցության անհնարինության պատճառով /գտնվում է հերթական արձակուրդում/ նիստը նախագահում է հանձնաժողովի անդամ Ն.Խաչատրյանը:

1. **<<ԾՔ-ԳՀԱՊՁԲ-19/42>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին համաձայն որակավորման պահանջները հիմնավորող փաստաթղթերը գնահատելու մասին**

1.1 Համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրած տեղեկատվության՝ **<<ՊՌՈ Ինվեստ>> ՍՊԸ-ն** հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի, ինչպես նաև բավարարում է սույն հրավերով սահմանված <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին:

1.2 Գնահատող հանձնաժողովը բավարար գնահատեց ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ **<<ՊՌՈ Ինվեստ>> ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հրավերով նախատեսված փաստաթղթերը և ապրանքի տեխնիկական բնութագրի համապատասխանությունը հրավերով նախատեսված պահանջներին, որը արտացոլվեց նախապես տրամադրված գնահատման թերթիկներում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

2. **<<ԾՔ-ԳՀԱՊՁԲ-19/42>> ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հաստատման մասին**

<u>Հանձնաժողովը որոշեց.</u>

2.1 Ծաղկաձորի համայնքապետարանի կարիքների համար լեռնադահուկային մարզահագուստի ձեռքբերման նպատակով հայտարարված ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել <<ՊՌՈ Ինվեստ>> ՍՊԸ-ին:

2.2 Հաստատել ԳՀ ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

2.3 Սույն ընթացակարգի դեպքում <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվում:

2.4 Պայմանագիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակցին առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի

ապահովում կնքվելիք պայմանագրի 10 (տասը) տոկոսի չափով՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով, որը ներկայացնելուց հետո սահմանված կարգով կկնքվի պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

Հանձնաժողովի նիստին ներկա անդամի անունը,ազգանունը	**Ստորագրությունը**
Նախագահ՝ Ն.Խաչատրյան	
Անդամներ՝ Լ.Խաչատրյան	
Ա.Միրզոյան	
Վ.Հայրապետյան	
Քարտուղար՝ Ա.Ավետիսյան	